ես խոսում, սարկավագ: Իսկ սա ասաց. սա ո՞վ է, որ մեր առջևից է գնում: Ասացի՝ վարպետ Թումիկն է: Ասաց՝ սա՞ է հերձվածող Թումիկը: Ասացի՝ այո՛: Սա ասաց՝ ահա տեսնում եմ, որ հրեշտակը դրա գլխից բարձր է, և երկու ղև սրա երկու ուսերի վրա նստել և սա խոսում է նրանց հետ: Եվ դարձավ նրան, ասաց, որ այն օրը տեսար հրեշտակներ ու դևեր, այսօր ինչո՞ւ չտեսար, թե ինչ է գալու քո գլխին: Այս որ լսեցին, բոլորը ծիծաղեցին:

Պետրոս կաթողիկոսը հարցրեց՝ ի՞նչ ես ասում, պատասխան տուր:

Օնոփրիոսն ասաց. «Այսպես, թե այնպես եկել եմ ձեր ոտքերը մեղայի»: Խաչատուր վարդապետը ասաց. «Ինչպե՞ս դա մեղա կլինի, քանի որ այն օրը, որ եկար այստեղ, ինչո՞ւ կաթողիկոսին ողջունելու չգնացիր, այլ գիշերը փախստական եղար, նաև խեղճ քրիստոնյայի տունը քանդեցիր. այս խաբեբայական խոսքերով կամենո՞ւմ ես պատժից ազատվել: Անօրեն մարդուն իր չարիքները կորուստ են տանում»: Կաթողիկոսը ելավ, մկրատը առավ, խուզեց մազերը և ասաց. «Այս ձեռքերը, որ դրի քո գլխին, թող սա պատժի քեզ, բերանս, որ բացվեց քո վրա, թող անիծի ու նզովի քեզ»:

Այս ասելով նրան առաքեցին և դրին մահահոտ ու խավարչտին մի բուրգի մեջ, մի ծառա նշանակեցին, որ հաց տա նրան. թող մնա այնտեղ և աղոթի իր մեղքերի համար: Այնտեղ մնալով որոշ օրեր, բայց բանտի գարշահոտ լինելու պատճառով տկարացավ: Հաղորդեցին կաթողիկոսին: Սա հրամայեց այնտեղից հանել նրան և դնել չոր վերնահարկում:

Մարդ ուղարկեցին Երևան, բերին նրա Մուղում անունով քրոջը ու մի պատանի նրա հետ, որ ծառայի իր եղբորը: Այնտեղ մնաց, մինչև առողջացավ: Բայց երբ մեկը գալիս էր նրա մոտ, նա մտնում էր վերմակի տակ և տնքում էր: Երբ հեռանում էին, նա նստում էր ուտելու և ըմպելու:

Մի օր քրոջը ուղարկեց Երևան և ասաց. «Այսինչ օրը իմ ջորին ուղարկիր Էջմիածին գյուղը՝ այսինչ տունը և այսինչ մարդուն նրա հետ: Ինքը Սուրբ Աթոռում բարեկամ ուներ: Աղաչանքով իր հետ միաբանեց և մի գիշեր, երբ պահը խաղաղվեց, իրեն կախեցին պարսպից, պատանին նրա հետ էր: Ջորին պատրաստ էր, նստեց նրա վրա և այն գիշեր գնաց Երևան: Բայց երկյուղի մեջ էր, չկարողացավ այնտեղ մնալ, բռնեց վարձկաններ և գնաց մինչև Նախիջևան, այնտեղից էլ՝ Թավրիզ ու Ղազվին, գնաց մինչև Սպահան: Գնաց խոջա Վարդանի տունը և շատ շատերի միջնորդությամբ հաշտվեց կաթողիկոսի հետ: Եվ գալով Սուրբ Աթոռ Էջմիածին, շրջում էր այստեղ-այնտեղ՝ խորհելով չարիքներ:

ԳԼՈՒԽ ԼԹ
ԱԲԱՍ ԽԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պարսից փոքր Շահ Աբաս թագավորը հրամայեց Նաջաֆղուլի խանին, որ Երևանի իշխանավորն էր, գնալ Շամախի և նրա փոխարեն Աբաս խանին ուղարկեց, որ Ամիրգունա խանի որդին էր, մի ծեր մարդ և տեսողությամբ տկար: Սա բարեկամություն արեց Հակոբ կաթողիկոսի հետ, բայց ոչ այնքան ագահ, այլ չափավոր: Սա այգի տվեց, որ նրա հոր կողմից տնկված էր Էջմիածնում՝ Սուրբ Հռիփսիմեի մոտ, Հակոբ կաթողիկոսին: Հաճախ գնում էր Սուրբ Էջմիածին զվարճանալու պատճառով. իսկ աղոթքների ժամին գնում էր եկեղեցի, նստում էր աթոռին և երգել էր տալիս քահանաներին, իսկ ինքը ունկնդրում էր: Ջորքին պատվիրում էր, որ իրենց հաշվին ուտեն և ոչ ոքի չվիրավորեն: Երբ ելնում էր գնալու, վանքին պարգևներ էր տալիս: Նաև դատերին իրավարար ու ճշմարտասեր էր ամբողջ կյանքի ընթացքում:

Սրա ժամանակ Օնոփրիոսը շրջում էր վանքերում և բորբոքում իր չարությունը, և հիշում էր իր չարությունը ինչպես հարդի տակ թաքցված կրակը և կամ թաշկինակի մեջ փաթաթված իժը, այդպես էլ նա ծածուկ չարիքները հիշում էր նրանց նկատմամբ, որ իբր իր նկատմամբ անարդար էին, ուստի հանդիմանվեց կաթողիկոսից: Այժմ նրանց միաբանեց իր հետ և շատ հայհոյական ստեր գրեցին կաթողիկոսի մասին Երուսաղեմի պատրիարք Եղիազարին, թե դու եկ Սուրբ Աթոռ և մենք քեզ կտանք Էջմիածնի կաթողիկոսությունը արքունական հրամանով: Ահա քեզ մոտ ենք ուղարկում Օնոփրիոս վարդապետին, որպեսզի քեզ փառավորապես բերի Սուրբ Աթոռս:

Այս գրեցին և իրենց հավատարիմների միջոցով նախապես ուղարկեցին, հետո Օնոփրիոսը գնաց թղթից հետո: Եվ եղավ այն-